**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<< 11 >> նոյեմբերի 2019թ. N ԱՊ/119-Ա 2019

Ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 62-Ն որոշման պահանջները՝ 2019 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ամբողջական փաթեթի կազմման, ծրագրերի ընթացքի և մշտադիտարկման նպատակով.

***որոշում եմ՝***

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Վ. Դավթյանին)՝ սուբվենցիայի ծրագրերի ամբողջական փաթեթի կազմման, հայտերով ներկայացվող ծրագրերի իրականացման իրագործելիության, ֆինանսական ցուցանիշների համապատասխանության ստուգման, ծրագրերի ընթացքի՝ մրցութային գործընթացի, պայմանագրերի կնքման և փաստացի կատարված աշխատանքների մշտադիտարկման վերջնական արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի քննարկմանը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Վարդազարյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/11/2019 18:13:08 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2019 թվականի ապրիլի 11-ի
N Ա/119-2019 որոշման

**ԿԱԶՄ**
**Աշխատանքային խմբի**

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**

| | |
|---|---|
| ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ | Վ. Դավթյան |

**Աշխատանքային խմբի անդամներ՝**

| | |
|---|---|
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Ա. Հովհաննիսյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ | Վ. Մկրտչյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ | Լ. Մուշեղյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ | Ա. Այվազյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար՝ | Ա. Հովհաննիսյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ՝ | Հ. Կուրղինյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար՝ | Լ. Հարությունյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ | Ա. Դանիելյան |
| ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ | Ա. Պողոսյան |

***ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝*** ***Վ. Վարդազարյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.04.2019 11:17:25 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217